ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-9/37-1

Երևան 29 -ը սեպտեմբերի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***19,222,090 (տասնինը միլիոն երկու հարյուր քսաներկու հազար իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:***

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան » ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱԱ0337548

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/37-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական հատկանիշներ	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը
2.	Ռեվմատիկ ֆակտոր թեսթ	100 թեսթ պարունակող կասետ 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	RFII, 100Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
3.	C -Ռեակտիվ սպիտակուց թեսթ	300 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	CRP LX, 300Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
4.	Տրանսֆերին թեսթ	100 թեսթ պարունակող կասետ 2-8 աստիճանաստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	TRSF Gen.2, 100Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
5.	Կալիբրատոր Preciset RF, (5 x 1 ml)	լրակազմում 5 x 1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	PRECISET RF	Roche Diagnostics
6.	Կալիբրատոր CFAS Myo (3 x 1 ml)	լրակազմում ստանդարտ 3 x 1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Cfas MYO,3x1ml	Roche Diagnostics
7.	Կալիբրատոր CFAS HbA1c (3X2 ml)	լրակազմում 3X2մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Cfas HbA1c, 3x2ml	Roche Diagnostics
8.	Կալիբրատոր C.f.a.s. PAC (3X1 ml)	լրակազմում 3X1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Cfas PAC 3 x 1 ML	Roche Diagnostics
9.	Կալիբրատոր Precimat Chromogen(6X0.5 ml)	լրակազմում 6x0, 5, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	PRECIMAT Chromogen 6x0.5ML	Roche Diagnostics
10.	Ստուգիչ RF Control (2X1 ml)	լրակազմում 2x1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Controlset RF II	Roche Diagnostics
11.	Ստուգիչ PrecicChrom I/II (6X1 ml)	լրակազմում 6x1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	PRECICHROM I/II	Roche Diagnostics
12.	Ստուգիչ MYO Control Set (2 x 2 x 3 ml)	լրակազմում 2 x 2 x 3 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	MYO Control Set	Roche Diagnostics
14.	ISE Դեպրոտեինայզեր, (6 x 21 ml)	լրակազմում 6x21մլ, 2-8 ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորմամբ	cobas integra ISE Deproteinizer 6x21 ML	Roche Diagnostics
15.	Էպենդորֆներ	1.5 մլ տարողությամբ, գործարանային փաթեթավորմամբ	Polypropylene micro conical test tube with cap. Eppendorf type.Vol. 1.5 ml, Non sterile	Vacutest Kima Group
17.	Լվացող կասետ, 150 թեսթ	150թեսթ, 15-25 ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված է Cobas Integra 400+ լաբորատոր անալիզատորի համար	cobas Integra Cleaner 150 Tests	Roche Diagnostics
18.	9% NaCL լուծիչ (6X22 ml)	լրակազմում 9% 6 x 22 մլ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված է Cobas Integra 400+ լաբորատոր անալիզատորի համար	cobas Integra NACl Diluent 9%	Roche Diagnostics
19.	Պրեսիկոնտրոլ TnT 4X2 ml	Լրակազմում 4x2 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Troponin PC Elecsys	Roche Diagnostics
20.	Միկրոկյուվետներ, 60 x 60	Լրակազմում 60 x 60, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	ASSAY CUP ELECSYS2010/cobas e411	Roche Diagnostics
27.	Հոմոցիստեին 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Homocysteine 100Tests, cobas c, Integra	Roche Diagnostics

28.	Դ-Դիմեր Gen 2 D-DI 100թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	D-Dimer Gen.2, 100Test, cobas c Integra	Roche Diagnostics
29.	Կալիբրատոր Հոմոսցիստեին հավաք 2X 3մլ	Լրակազմում 2x3մլ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Homocysteine Calibrator Kit 2x3ml	Roche Diagnostics
30.	Դ-Դիմեր Gen 2 կալիբրատորի հավաք 6 X0.5 մլ	Լրակազմում 6 x0.5մլ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	D-Dimer Gen.2 Calibrator Set	Roche Diagnostics
31.	Թիրեոգլոբուլին 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	TG G2 Elecsyscobas e 100	Roche Diagnostics
32.	Կալցիտոնին 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Calcitonin	Roche Diagnostics
41.	Ռետինե գրանուլաներ Mixed-Bed resin 25L	Իոնափոխանակման խեժ, 25 լcobas 6000 անալիզատորի համար:	Refill f.Aquad.20 SDF 25L (Mixed-bed resin MBH 100 (AppliQUA MBH))	Roche Diagnostics
42.	UV լամպ Դեիոնիզացնող սարքի	Cobas 6000 անալիզատորի համար Դեիոնիզացնող սարքի թորման ուլտրամանուշակագույն լամպ:	UV Lamp for WSU	Roche Diagnostics
43.	Էլեկսիս վիտամին D -ի պրեսիկոնտրոլ	Էլեկսիս ընդհանուր վիտամին D-ի պրեսիկոնտրոլ, Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 6x1մլ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: For In Vitro Diagnostic.	PC Vitamin D Total II	Roche Diagnostics
44.	D-Dimer -ի ստուգիչ	D-Dimer Gen2 control I/II կոնտրոլ cobas 6000 անալիզատորի համար: Ֆորմատ՝ I-ին մակարդակ -2 x 1 մլ, II-րդ մակարդակ- 2 x 1 մլ, ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: For In Vitro Diagnostic only.	D-Dimer Gen. 2 Control I/II	Roche Diagnostics
45.	Homocysteine-ի ստուգիչ	Homocysteine-ի կոնտրոլ cobas 6000 անալիզատորի համար, Ֆորմատ՝ ստուգիչ 1--2 x 3 մլ, ստուգիչ 2 --2 x 3 մլ, ֆիրմային նշանի առկայությունը: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն, For In Vitro Diagnostic only.	Homocysteine Control Kit	Roche Diagnostics
48.	Հակաբիոտիկի դիսկ N50Վանկոմիցին	Հակաբիոտիկային դիսկ, լրակազմում՝50 հատ սրվակում, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորմամբ:	Vancomycin	Liofilchem
49.	Հակաբիոտիկի դիսկ N50Կլինդամիցին	Հակաբիոտիկային դիսկ, լրակազմում՝50 հատ սրվակում, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորմամբ:	CLINDAMYCIN	Liofilchem
53.	Հակաբիոտիկի դիսկ N50 Ցեֆոտաքսիմ	Հակաբիոտիկային դիսկ, լրակազմում՝50 հատ սրվակում, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորմամբ:	Cefotaxime	Liofilchem
57.	Հակաբիոտիկի դիսկ N50 Նիտրոքսոլին	Հակաբիոտիկային դիսկ, լրակազմում՝50 հատ սրվակում, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորմամբ:	Nitroxoline	Liofilchem
59.	Հակաբիոտիկի դիսկ N50 Ազիտրոմիցին	Հակաբիոտիկային դիսկ, լրակազմում՝50 հատ սրվակում, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորմամբ:	AZITHROMYCIN	Liofilchem
62.	Լվացող հեղուկ S1 RINSE SOLUTION	Նախատեսված Կոբաս b221 անալիզատորի համար, IVD: Ֆորմատ՝ 2x1850 մլ: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան:	S1 RINSE Solution	Roche Diagnostics
63.	Հեղուկի փաթեթ S2 FLUID PACK	Նախատեսված Կոբաս b221 անալիզատորի համար, IVD: Ֆորմատ՝ 1 հատ: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան:	FLUID RACK S2	Roche Diagnostics
64.	Որակի ստուգման հեղուկներCOMBITROL Plus B, Level 1	Որակի ստուգման հեղուկներ Cobasb 221 անալիզատորների համար1-ին մակարդակի, տուփում 30 սրվակ: Ֆիրմային նշանի առկայությունը: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն, For In Vitro Diagnostic	COMBITROL PLUS B,Level 1	Roche Diagnostics

65.	Որակի ստուգման հեղուկներCOMBITROL Plus B, Level 2	Որակի ստուգման հեղուկներ Cobasb 221 անալիզատորների համար2-րդ մակարդակի, տուփում 30 սրվակ: Ֆիրմային նշանի առկայությունը: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն, For In Vitro Diagnostic	COMBITROL PLUS B,Level 2	Roche Diagnostics
66.	Որակի ստուգման հեղուկներCOMBITROL Plus B, Level 3	Որակի ստուգման հեղուկներ Cobasb 221 անալիզատորների համար 3-րդ մակարդակի, տուփում 30 սրվակ: Ֆիրմային նշանի առկայությունը: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն, For In Vitro Diagnostic	COMBITROL PLUS B,Level 3	Roche Diagnostics
67.	ԴեպրոտեինայզերDEPROTEINIZER (125 ML)	Դեպրոտեինայզեր 125 մլ Cobas b 221 անալիզատորի համար: Ֆիրմային նշանի առկայությունը: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճանում, For In Vitro Diagnostic	DEPROTENIZER 125ML	Roche Diagnostics
68.	Տպիչի թուղթPRINTER PAPER OMNI/cobas b 221	Տպիչի թուղթ OMNI/cobas b221 սարքի համար, Լրակազմում՝ 6 հատ:	PRINTER PAPER OMNI/cobas b 221 (6 PCS)	Roche Diagnostics
69.	իոնների չափման խցիկISE Measuring chamber	cobas b221 վերլուծիչի համար նախատեսված, արյան մեջ իոնների չափման խցիկ.	ISE Measuring chamber	Roche Diagnostics
70.	խնամքի հավաքածուKit PM cobas B221 <4> (3 Yearly)	cobas b221 վերլուծիչի համար նախատեսված, 3 տարվա խնամքի հավաքածու, ներառում է խողովակների ամբողջական հավաքածու:	Kit PM cobas B221 <4> (3 year)	Roche Diagnostics
71.	խնամքի հավաքածուKit Maintenance AQC	cobas b221 վերլուծիչի համար նախատեսված, որակի վերահասկման համակարգի խնամքի հավաքածու:	Kit Maintenance AQC	Roche Diagnostics
72.	Արյան ներարկման և բաշխման համակարգ/T&D Module complete	cobas b221 վերլուծիչի համար նախատեսված, արյան ներարկման և բաշխման համակարգ	T&D Modul komplett	Roche Diagnostics
73.	SCON-էլեկտրոդ	cobas b221 վերլուծիչի համար նախատեսված, Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան:	SCON	Roche Diagnostics

Չափման միավորը՝ վերաբերում է տեխնիկական բնութագրում նկարագրված բաղկացուցիչ մասերի ամբողջությանը:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱԱ033 7548

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/h	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (<< դրամ)	ընդհանուր գումարը (<< դրամ)	մատակարարումը 2020թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.11.2020թ.
2.	Ռեվմատիկ ֆակտոր թեսթ	հատ	20	40,110	802,200	20
3.	C -Ռեակտիվ սպիտակուց թեսթ	հատ	10	142,000	1,420,000	10
4.	Տրանսֆերին թեսթ	հատ	1	30,620	30,620	1
5.	Կալիբրատոր Preciset RF, (5 x 1 ml)	լրակազմ	7	49,810	348,670	7
6.	Կալիբրատոր CFAS Myo (3 x 1 ml)	լրակազմ	2	35,360	70,720	2
7.	Կալիբրատոր CFAS HbA1c (3X2 ml)	լրակազմ	7	90,730	635,110	7
8.	Կալիբրատոր C.f.a.s. PAC (3X1 ml)	լրակազմ	5	46,140	230,700	5
9.	Կալիբրատոր Precimat Chromogen(6X0.5 ml)	լրակազմ	2	67,380	134,760	2
10.	Ստուգիչ RF Control (2X1 ml)	լրակազմ	2	70,290	140,580	2
11.	Ստուգիչ PrecicChrom I/II (6X1 ml)	լրակազմ	1	82,580	82,580	1
12.	Ստուգիչ MYO Control Set(2 x 2 x 3 ml)	լրակազմ	1	100,480	100,480	1
14.	ISE Դեպրոտեինայզեր, (6 x 21 ml)	լրակազմ	1	9,000	9,000	1
15.	Էպենդորֆներ	հատ	10000	7	70,000	10000
17.	Լվացող կասետ, 150 թեսթ	հատ	1	2,380	2,380	1
18.	9% NaCL լուծիչ (6X22 ml)	լրակազմ	2	15,000	30,000	2
19.	Պրեսիկոնտրոլ TnT 4X2 ml	լրակազմ	1	18,690	18,690	1
20.	Միկրոկյուվետներ, 60 x 60	լրակազմ	1	46,000	46,000	1
27.	Հոմոցիստեին 100 թեսթ	լրակազմ	2	378,000	756,000	2
28.	Դ-Դիմեր Gen 2 D-DI 100թեսթ	լրակազմ	3	272,000	816,000	3
29.	Կալիբրատոր Հոմոսցիստեին հավաք 2X 3մլ	լրակազմ	2	44,600	89,200	2
30.	Դ-Դիմեր Gen 2 կալիբրատորի հավաք 6 X0.5 մլ	լրակազմ	4	93,000	372,000	4
31.	Թիրեոգլոբուլին 100 թեսթ	լրակազմ	2	84,000	168,000	2
32.	Կալցիտոնին 100 թեսթ	լրակազմ	1	285,000	285,000	1
41.	Ռետինե գրանուլաներ Mixed-Bed resin 25L	հատ	3	104,200	312,600	3
42.	UV լամպ Դեիոնիզացնող սարքի	հատ	1	96,000	96,000	1
43.	Էլեկսիս վիտամին D -ի պրեսիկոնտրոլ	լրակազմ	1	71,050	71,050	1
44.	D-Dimer -ի ստուգիչ	լրակազմ	1	142,100	142,100	1
45.	Homocysteine-ի ստուգիչ	լրակազմ	1	73,410	73,410	1
48.	Հակաբիոտիկի դիսկ N50Վանկոմիցին	լրակազմ	3	1,600	4,800	3
49.	Հակաբիոտիկի դիսկ N50Կլինդամիցին	լրակազմ	3	1,600	4,800	3
53.	Հակաբիոտիկի դիսկ N50 Ցեֆոտաքսիմ	լրակազմ	3	1,600	4,800	3
57.	Հակաբիոտիկի դիսկ N50 Նիտրոքսոլին	լրակազմ	4	1,600	6,400	4
59.	Հակաբիոտիկի դիսկ N50 Ազիտրոմիցին	լրակազմ	4	1,600	6,400	4

62.	Լվացող հեղուկ S1 RINSE SOLUTION	հատ	15	62,750	941,250	15
63.	Հեղուկի փաթեթ S2 FLUID PACK	հատ	22	165,050	3,631,100	22
64.	Որակի ստուգման հեղուկներCOMBITROL Plus B, Level 1	լրակազմ	1	69,430	69,430	1
65.	Որակի ստուգման հեղուկներCOMBITROL Plus B, Level 2	լրակազմ	1	69,430	69,430	1
66.	Որակի ստուգման հեղուկներCOMBITROL Plus B, Level 3	լրակազմ	1	69,430	69,430	1
67.	ԴեպրոտեինայզերDEPROTEINIZER (125 ML)	հատ	4	14,450	57,800	4
68.	Տպիչի թուղթPRINTER PAPER OMNI/cobas b 221	լրակազմ	5	34,920	174,600	5
69.	իոնների չափման խցիկISE Measuring chamber	հատ	2	1,200,000	2,400,000	2
70.	խնամքի հավաքածուKit PM cobas B221 <4> (3 Yearly)	լրակազմ	2	960,000	1,920,000	2
71.	խնամքի հավաքածուKit Maintenance AQC	լրակազմ	2	180,000	360,000	2
72.	Արյան ներարկման և բաշխման համակարգ/T&D Module complete	լրակազմ	2	960,000	1,920,000	2
73.	SCON-էլեկտրոդ	լրակազմ	4	57,000	228,000	4
Ընդամենը					**19,222,090**	

Ապրանքները պետք է ունենան.

1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):
2.Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):
3.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:
4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:
5. Մատակարարման վայր սահմանել ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա:
***թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատկարարման ժամանակ**
Չափման միավորը՝ վերաբերում է տեխնիկական բնութագրում նկարագրված բաղկացուցիչ մասերի ամբողջությանը:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

AH 033 7548

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			
չ/h	CPV և ապրանքի անվանումները	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝
2.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Ռեվմատիկ ֆակտոր թեսթ/	33691162/115	802,200
3.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/C -Ռեակտիվ սպիտակուց թեսթ/	33691162/76	1,420,000
4.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Տրանսֆերին թեսթ/	33691162/116	30,620
5.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կալիբրատոր Preciset RF, (5 x 1 ml)/	33691420/459	348,670
6.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կալիբրատոր CFAS Myo (3 x 1 ml)/	33691420/460	70,720
7.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կալիբրատոր CFAS HbA1c (3X2 ml)/	33691420/461	635,110
8.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կալիբրատոր C.f.a.s. PAC (3X1 ml)/	33691420/462	230,700
9.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կալիբրատոր Precimat Chromogen(6X0.5 ml)/	33691420/463	134,760
10.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ստուգիչ RF Control (2X1 ml)/	33691420/464	140,580
11.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ստուգիչ PrecicChrom I/II (6X1 ml)/	33691420/465	82,580
12.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ստուգիչ MYO Control Set(2 x 2 x 3 ml)/	33691420/468	100,480
14.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/ISE Դեպրոտեինայզեր, (6 x 21 ml)/	33691420/449	9,000
15.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Էպենդորֆներ/	33691167/72	70,000
17.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Լվացող կասետ, 150 թեսթ/	33691167/55	2,380
18.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/9% NaCL լուծիչ (6X22 ml)/	33691420/359	30,000
19.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Պրեսիկոնտրոլ TnT 4X2 ml/	33691400/45	18,690
20.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Միկրոկյուվետներ, 60 x 60/	33691400/41	46,000
27.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հոմոցիստեին 100 թեսթ /	33691420/361	756,000
28.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Դ-Դիմեր Gen 2 D-DI 100թեսթ/	33691420/362	816,000
29.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/ԿալիբրատորՀոմոսցիստեին հավաք 2X 3մլ/	33691420/363	89,200
30.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Դ-Դիմեր Gen 2 կալիբրատորի հավաք 6 X0.5 մլ/	33691420/364	372,000
31.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Թիրեոգլոբուլին 100 թեսթ/	33691420/365	168,000
32.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կալցիտոնին 100 թեսթ/	33691420/366	285,000
41.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Ռետինե գրանուլաներ Mixed-Bed resin 25L/	33691162/101	312,600
42.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/UV լամպԴեիոնիզացնող սարքի/	33691162/102	96,000
43.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Էլեկսիս վիտամին D -ի պրեսիկոնտրոլ/	33691420/421	71,050
44.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/D-Dimer -ի ստուգիչ/	33691420/422	142,100
45.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Homocysteine-ի ստուգիչ/	33691420/423	73,410
48.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50Վանկոմիցին/	33691420/426	4,800
49.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50Կլինդամիցին/	33691420/427	4,800
53.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50 Ցեֆոտաքսիմ/	33691420/431	4,800
57.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50 Նիտրոքսոլին/	33691420/435	6,400

59.	**Լաբորատոր ազ[illegible] (ռեագենտներ) բազմակո[illegible]**/Հակաբիոտիկի դիսկ N50 Ա[illegible]/	33691420/437	6,400
62.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Լվացող հեղուկ S1 RINSE SOLUTION/	33691162/105	941,250
63.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Հեղուկի փաթեթ S2 FLUID PACK/	33691162/106	3,631,100
64.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Որակի ստուգման հեղուկներCOMBITROL Plus B, Level 1/	33691420/439	69,430
65.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Որակի ստուգման հեղուկներCOMBITROL Plus B, Level 2/	33691420/440	69,430
66.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Որակի ստուգման հեղուկներCOMBITROL Plus B, Level 3/	33691420/441	69,430
67.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/ԴեպրոտեինայզերDEPROTEINIZER (125 ML)/	33691162/107	57,800
68.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Տպիչի թուղթPRINTER PAPER OMNI/cobas b 221/	33691420/442	174,600
69.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Իոների չափման խցիկISE Measuring chamber/	33691162/108	2,400,000
70.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Խնամքի հավաքածուKit PM cobas B221 <4> (3 Yearly)/	33691420/443	1,920,000
71.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Խնամքի հավաքածուKit Maintenance AQC/	33691420/444	360,000
72.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Արյան ներարկման և բաշխման համակարգ/T&D Module complete/	33691420/445	1,920,000
73.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/SCON-էլեկտրոդ/	33691420/446	228,000
Ընդամենը			**19,222,090**

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԶՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱՐԵՎՈՍՅԱՆ

AH 0337543

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-9/37-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-9/37-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն